ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/23465-20
17.09.2020թ.

Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
հեռ. 091407836, էլ. հասցե. foi@foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
տնօրեն
Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման (ՀՀ ԱԳՆ մուտքագրվել է 15.09.2020թ.)՝ հայտնում ենք, որ 2020թ. մարտի 16-ից սեպտեմբերի 15-ը ԱԳՆ ստացել է շուրջ 490 հարցում, որից 110-ը ստացվել է էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով: Ստացված հարցումներից շուրջ 95 եղել է թղթային տարբերակով, մնացածը ստացվել են e-request.am հարթակի կամ ԱԳՆ պաշտոնական էլ. փոստի միջոցով:

Քաղաքացիների հարցումներին արագ արձագանքման նպատակով գործում է նաև ԱԳՆ ֆեյսբուքյան հարթակի հաղորդագրությունների հնարավորությունը, որի միջոցով տվյալ ժամանակահատվածում պատասխան է տրամադրվել 1117 քաղաքացուց ստացված ավելի քան 3700 հարցման:

Հավելյալ տեղեկացնում ենք, որ ԱԳՆ կայքէջում՝ https://www.mfa.am/hy/req_stat/ հղումով, հասանելի է կիսամյակային կտրվածքով ԱԳՆ ստացած հարցումների վիճակագրությունը:

Հարգանքով՝

Invalid signature

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային դիվանագիտության վարչության պետ

*Լրատվամիջոցների հետ կապի և հանրային դիվանագիտության բաժին*
*հեռ. 060 620 234*